

Սոցիալական ռիսկի հիմնահարցը անցումային հասարակություններում

Գրիգորյան Աննա

Հանգուցային բառեր. *սոցիալական ռիսկ, ռիսկային հասարակություն, տարբերակի ընտրություն, սոցիալական գործառույթ, վերակառուցվող հասարակություն, սոցիալական որոշում, ռիսկային իրավիճակ, ռիսկի աստիճան*

Անցումային հասարակությունը՝ որպես հասարակության ամբողջի գոյության և գործառույթյան յուրահատուկ վիճակ, հատկապես վերջերս դարձել է սոցիալական հիմնահարցերով զբաղվող մասնագետների ուսումնասիրության առարկա: Նման գիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող այս պրոբլեմը, ունենալով դեռևս վերջնական, ամփոփ տեսական նկարագիր, տարբեր հետազոտողների կողմից դիտարկվում է տարբեր տեսանկյուններից: Անցումային հասարակությունը հասարակության մի այնպիսի վիճակ է, երբ խախտվել է համակարգային հին որակական որոշակիությունը, և նորը դեռևս չի ձևավորվել: Այդ ժամանակ հասարակության տնտեսական, սոցիալ-ինստիտուցիոնալ և էթնոմշակութային ոլորտներում սկսում են միաժամանակ գործել այլընտրանքային մեխանիզմներ, և երբ այդ մեխանիզմներից մեկը հաստատում է իր գերակայությունը մյուսների նկատմամբ և ստանում համահասարակական նշանակություն, ապա հասարակությունը դադարում է անցումային կոչվելուց: Բսկ դա նշանակում է, որ անցումային հասարակության այլընտրանքայնության հաղթահարումը ոչ միայն առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հաղթահարման, այլև սովյալ հասարակության պատմական հեռանկարի ընտրության գործընթաց է: Այդ իսկ պատճառով էլ անցումային հասարակությունների բնորոշ վիճակներից մեկը ռիսկայնությունն է: Այլընտրանքայնության հաղթահարման ժամանակ ռիսկը դրսևորվում է այն բանում, որ հարկավոր է ընտրել այլընտրանքային մեխանիզմներից մեկը կամ մյուսը և, հասարակության տնտեսական կամ քաղաքական կյանքը կառուցելով այդ մեխանիզմի հիման վրա, հասարակությունը կապրի կամ պրոգրեսիվ զարգացում, կամ ռեգրեսիվ զարգացում:

Ռիսկի սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունը անմիջապես առնչվում է տրանսֆորմացիոն խնդիրների, դրանց լուծման դժվարությունների, ինչպես նաև դրանց հարուցած անկանխատեսելի հետևանքների հիմնահարցերին: Սկստենք, սակայն, որ «տրանսֆորմացիոն խնդիր» հասկացությունը սոցիալ-փիլիսոփայական մյուս հիմնարար կատեգորիաների չափ խորությամբ վերլուծված չէ: Անցումային հասարակության պայմաններում «տրանսֆորմացիոն խնդիրները» և նրանց բովանդակային կողմի ուսումնասիրությունը շատ ավելի հրատապ են դառնում, քանի որ այդ հասարակությունն ինքնին սոցիալական մի յուրահատուկ ռիսկային խնդիր է, որի արագ և օպտիմալ լուծումից էլ կախված է համակարգի

հետագա ճակատագիրը: Այն համակարգի ապագա սոցիալական և գործառնական վիճակների ակտուալացման մոդելն է:

Ըստ այդմ էլ՝ կարելի է առանձնացնել անցումային հասարակության այլընտրանքայնությամբ պայմանավորված, ռիսկի դրսևորման հետևյալ մակարդակները.

1. ռիսկ, որն առկա է անորոշության իրավիճակում տրանսֆորմացիոն խնդրի գնահատման ժամանակ,

2. ռիսկ, որն առկա է տրանսֆորմացիոն խնդրի լուծման եղանակի ընտրության ժամանակ,

3. ռիսկ, որն առկա է տրանսֆորմացիոն խնդրի լուծման իրականացման ժամանակ:

Վերարտադրության և զարգացման ընթացքում վերակառուցվող հասարակությունը երբեմն դրսևորում է այնպիսի շեղումներ, որոնք նախապես չեն ածանցվում համակարգի տվյալ սոցիալ-գործառնական վիճակից: Այդ պատճառով էլ անցումային հասարակությունը, որպես կանոն, հավանական որոշակիություն է: Այստեղ խնդիրն այն է, որ նույնիսկ իր որոշակության մեջ սոցիալական կյանքն ակնհայտ չէ: Անցումային հասարակությունը հավանական որոշակիություն է նաև այն պատճառով, որ չունի հստակ ձևակերպված սոցիալ-տնտեսական և քաղաքական նպատակ, այդ նպատակին հասնելու եղանակների ու մեթոդների՝ գիտականորեն հիմնավորված ծրագիր և, ինչպես վկայում է հետխորհրդային հասարակությունների փորձը, դեկավարվում է «փորձի ու սխալի» մեթոդով: Եվ դա հասկանալի է, որովհետև այնքան էլ հեշտ չէ մշակել տրանսֆորմացիոն փոփոխությունների տեխնոլոգիա, առավել ևս, որ այդ փոփոխությունները մասշտաբային են և առնչվում են սոցիալական կյանքի բոլոր ոլորտներին: Այդ պատճառով էլ տրանսֆորմացիոն խնդիրը հասարակական կյանքի առանձնահատկություններից բխող այնպիսի գործառույթ է, որի լուծումը ենթադրում է գործառնական որոշակիություն, որոշակի կարգի ու հաջորդականության վերականգնում: Մակայն այստեղ պետք է նշել, որ ցանկացած տրանսֆորմացիոն խնդիր, որքան էլ այն միանշանակ լինի, որպես կանոն, ունի լուծման մի շարք հնարավոր, այլընտրանքային եղանակներ:

Լուծել որևէ տրանսֆորմացիոն խնդիր՝ նշանակում է սոցիալական համակարգի զարգացման բազում հնարավոր եղանակներից ընտրել այն մեկը, որն առավել արդյունավետ կդարձնի հասարակական կյանքի զարգացումն ու գործառնությունը:

Անկանխատեսելիությունը, արտաքին և ներքին, առարկայական և ենթակայական գործոններից կախվածությունը անցումային հասարակության զարգացումների բնորոշ գծերից մեկն է: Այս ամենի արդյունքում մի կողմից մեծանում է ձախողման հավանականությունը, մյուս կողմից՝ սոցիալական էքսպերիմենտատորը զրկվում է սխալվելու իրավունքից, ինչը հանգեցնում է ռիսկայնության

կտրուկ մեծացման: Բոլոր դեպքերում ռիսկն այստեղ հանդես է գալիս որպես սուբյեկտի կողմից անորոշության լուծման, որոշակի իրավիճակում հակադիր միտումների զարգացման մոդել: Եվ ստացվում է, որ փոփոխությունների տեսությունից բացի՝ առանց որոշումների ընդունման և դրանց իրականացման գործընթացները հաշվի առնելու պարզապես իմաստ չունի խոսել դիսկի մասին [1, 28]:

Սոցիալական որոշումների միանշանակ ընդունմանը և իրականացմանը խանգարում է նաև այն հանգամանքը, որ ցանկացած տրանսֆորմացիոն խնդրի լուծում առնչվում է սոցիալական տարբեր շերտերի ու խավերի շահերի հետ: Այդ պատճառով էլ լուծման այս կամ այն եղանակի ընտրությունը երբեմն կարող է հանդիպել հսկայական սոցիալական դիմադրության: Նախապատրաստված և հարմարված լինելով նախորդ հասարակարգի դերային համակարգին՝ մարդկանց մեծամասնությունը անցումային շրջանի սոցիալական խնդիրների մեջ տեսնում է «նվազագույն բարեկեցության» կորստի վտանգ և համակված անցյալի կարոտախտով՝ մերժում է այդ խնդիրների արմատական լուծման եղանակը: Այստեղ սոցիալական բարեփոխումներ իրականացնող ուժերի համար առաջանում է ռիսկ, որ նրանց ծրագրերը, ինչքան էլ արդյունավետ և տեղին հաշվարկված լինեն, կարող են պարզապես չընդունվել հանրության կողմից:

Սակայն ամեն դեպքում պետք է նկատի ունենալ, որ ռիսկը տրանսֆորմացիոն գործընթացների անխուսափելի հետևանքն է, և այն պետք է դիտարկել որպես մարդկային գործունեությունը ռացիոնալացնող, ապագայի անորոշությանը և անհայտությանը հարմարվելու յուրահատուկ մի ձև [2, 208]:

Անցումային հասարկությունը ինքնին ռիսկ արտադրող համակարգ է: Ընդ որում ռիսկի արտադրությունը ներառում է նրա բոլոր ոլորտները՝ արտադրական համակարգը, ամենօրյա կյանքը, շրջակա միջավայրը, սոցիոմշակութային ոլորտը և այլն: Ռիսկի արտադրությունը տարածվում է գործառնական բոլոր ոլորտների վրա և ներթափանցում է կյանքին օժանդակող բոլոր համակարգերի մեջ, ինչի արդյունքում հասարակությունը չի կարողանում համարժեքորեն արձագանքել նրա սոցիալական ու տնտեսական փոփոխություններին: Հետխորհրդային հանրություններում արմատավորված «անվստահության մշակույթը» ռիսկային միջավայրը պայմանավորող ամենակարևոր գործոններից մեկն է:

Մասնավորապես մեր պարագայում այդ ռիսկը հանդիսանում է խորհրդային համակարգի ու նրա արժեքների անկման արդյունքում հանրության մեջ կուտակված փուլման բացասական էներգիայի դրսևորման հետևանքը: Փուլման էներգիան՝ որպես սոցիալական ռիսկի ակտիվացման գործոն, պետք չէ ընդունել իբրև սոցիալական «հիվանդության» կամ վարքի նորմատիվ դրսևորումից շեղված մի ձև: Այն իր հիմքերով ռացիոնալ երևույթ է, որը նախկին համակարգի սոցիոմշակութային արժեքների այլափոխման պատճառով հասարակության մեջ առաջացող դժգոհության էներգիայի՝ որպես սոցիալական բողոքի դրսևորման արտահայտությունն է: Դժգոհության էներգիայի այսպիսի տարածումը շատ վտանգա-

վոր է և իր մեջ ռիսկ է պարունակում ինչպես ընդհանրապես ցանկացած սոցիալական կարգի, այնպես էլ նրա նորմատիվ-արժեքային դաշտի և ինստիտուցիոնալ կառույցների համար: Այստեղ է, որ փլուզման էներգիան իր ուղղվածությամբ հակադրվում է հասարակության մեջ մոբիլիզացիոն քաղաքականության իրականացմանը: մինչ առաջադեմ սոցիալական ուժերը մոբիլիզացնում են հասարակական օգտակար ռեսուրսները հասարակության մեջ տրանսֆորմացիոն գործընթացների դրական ելքի համար, դժգոհության արդյունքում առաջացած էներգիան այդ ռեսուրսները վերածում է անօգուտ ծախսերի: Եվ եթե մոբիլիզացիան նպատակ է հետապնդում բարձրացնել համակարգի կազակերպվածության աստիճանը, ապա այս դեպքում մենք արդեն գործ ունենք համակարգային կազմակերպվածության իջեցման հետ: Պետք է նկատի ունենալ, որ նախկինում գոյություն ունեցող սոցիալական կարգի արմատական փլուզման գործընթացից և անկումից հետո առաջացած էներգիայի մոբիլիզացիայի ուստայիական-սոցիալական ծրագրով առաջնորդվող նոր համակարգը ևս ինքնին ռիսկածին է, քանի որ այն իր հիմքերով ունի արհեստական բնույթ, հատկապես եթե խոսքը մեր նախորդ՝ ամբողջատիրական համակարգի ժառանգների մասին է: Այս դեպքում իր անցյալում գենետիկ ազդեցիվություն և զավթողական քաղաքականություն ունեցող համակարգում ցանկացած ռիսկ կարող է մեկնաբանվել որպես նոր հասարակության ստեղծման համար անհրաժեշտ սոցիալական գին, որը հատուցվում է համակարգը «կենդանի» պահելու համար: Իսկ ռեֆորմների «սոցիալական գինը» այս դեպքում տարեցտարի աճում է, որովհետև հին ռիսկերը ոչ թե վերանում են, այլ փոխակերպվում են և հետզհետե կուտակվում: Հարցը հետևաբար հանգում է նրան, թե ինչպես է գոյատևելու հանրությունը անցման այդպիսի գործընթացների ժամանակ: Ցավն այն է, որ ներկայումս հետխորհրդային հասարակությունները իրենց կայունությունը հիմնականում ապահովում են մարդկային և բնական ռեսուրսների գերշահագործման շնորհիվ՝ մոռանալով, որ մենք այնպիսի սոցիալական համակարգի ժառանգ ենք, որն անհնար է ձևափոխել՝ մնալով նրա սահմաններում [3, 272]:

Արդյունքում միանգամայն օրինաչափ է ավանդապաշտական հասարակության արժեքներին ու կառույցներին վերադարձի միտումը մեր հասարակության մեջ, որը իրականացվում է համապատասխան սոցիալական գաղափարախոսությունների վերածննդի միջոցով:

Այս է պատճառը, որ ռիսկը անցումային հասարակություններում արտադրվում է հիմնականում տարբեր սոցիալական գաղափարախոսությունների և վարդապետությունների կողմից: Այսպիսի ընդհանուր համակարգային ռիսկի արտահայտություններն սկսում են դրսևորվել հասարակության տարբեր մակարդակներում՝ տնտեսականից սկսած և սոցիոմշակութայինով վերջացրած:

Հարցն այն է, որ հարկադիր շուկայականացման ընթացքում ռիսկի արտադրությունը դառնում է չափազանց եկամտաբեր: Ինչքան քիչ մարդ կամ խմբեր են

տիրում օրենքին, այնքան շատ է նրանց եկամուտը: Արդյունքում ռիսկն ինքնին դառնում է արժեք՝ վերածվելով կլան-կորպորացիաների ձեռքում համակարգի դեմ պայքարի հզոր զենքի: Մյստեղ է, որ տեխնոլոգիական վթարներն ու աղետները կարող են օգտագործվել որպես երկրի ինդուստրիալ համակարգը կառավարության կողմից ղեկավարելու անկարողության ապացույց: Մյուս կողմից՝ շուկայի «սև և սպիտակ» հատվածները՝ օրինական և քրեական կառույցները, միավորվելով ստեղծում են այսպես կոչված «գորշ տնտեսական գոտիներ» և այդ գոտու խաղի կանոնները կարգավորող հատուկ կառույցներ:

Այս և նման մի շարք հանգամանքներով էր պայմանավորված, որ խորհրդային համակարգի անկումը առաջ բերեց նաև դրամատիկ ինստիտուցիոնալ փոփոխություններ: Պետությունից համընդհանուր օտարման ու փոխադարձ անվստահության պատճառով ընտանիքն ու կլանային կառույցները դառնում են հասարակության կենտրոնական ինստիտուտներ: Հասարակության ողջ ինստիտուցիոնալ համակարգը սկսում է դիմակայել ներքևից եկող ցանկացած սոցիալական նախաձեռնության, քանի որ այն կարող է վտանգ ներկայացնել պետության բյուրոկրատական համակարգի ինքնապահպանման համար:

Տրանսֆորմացիոն գործընթացների արդյունքում առաջացած սոցիոմշակութային անորոշությունը մարդկանց մոտ առաջացնում է վաղվա օրվա նկատմամբ վախի և տագնապի զգացում: Իսկ այն հասարակությունը, ուր առկա է ինչ-որ բանի հանդեպ տագնապ, արդեն ինքնին ռիսկային է:

Իզոլը չէ, որ անցումային հասարակությունը և նրան համընթաց ռիսկի մշակույթը ժամանակակից մարդու մեջ ծնում են մի շարք հակասական հոգեբանական վիճակներ, որոնք արտահայտվում են ապագայի նկատմամբ կասկածի, վախի ակնկալիքի ձևով: Պատճառն այն է, որ հասարակության մեջ դադարում է գործել նախկին սոցիոմշակութային արժեքների ամբողջականությունը, ինչն առաջացնում է հասարակության մեջ ապակողմնորոշման վիճակ: Արդյունքում հասարակության առանձին անհատի կենսական ճանապարհը սկսում է հանդես գալ որպես մի «մաքուր ժամանակահատված»՝ գրեթե զրկվելով նախորդ սերունդների սոցիալական և քաղաքական փորձից, սոցիոմշակութային ժառանգությունից [4, 200]:

Տվյալ հանրության մեջ առկա էթնոմշակույթն է, որ պայմանավորում է, թե ինչն է ճշմարիտ և ինչը՝ սխալ հասարակական հարաբերություններում, էթնոմշակույթից են կախված տվյալ հանրության հոգեկերտվածքը, նրա հատկությունները, նպատակները, ձգտումները, կենսակերպը: Հետևաբար նոր սոցիալ-ինստիտուցիոնալ մշակույթի արհեստական ներդրման փորձը այնտեղ, ուր մարդիկ ղեկավարվում են իրենց սեփական իմաստներով, արժեքներով և նորմերով, արդարության և պատշաճության սեփական չափանիշներով, չի կարող երբևիցե պսակվել հաջողությամբ, նույնիսկ եթե այլ հոգեկերտվածքով մարդկանց համար ներարկվող մշակույթը հանդիսանում է չափանմուշային: Գերազանց սահմանադրության գործառնությունը հասարակության մեջ դեռևս չի խոսում նաև գերա-

զանց հասարակության մասին, մինչդեռ կամային և աշխատասեր անդամներից բաղկացած հասարակությունը անխուսափելիորեն մի օր կստեղծի համակեցության քիչ թե շատ կատարյալ նորմեր:

Եվ գուցե էթնոմշակույթի և սոցիալական մշակույթի այսպիսի փոխհարաբերությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ քաղաքացիական հասարակությունները համեմատաբար արագ վերացվեցին Լեհաստանում, Հունգարիայում, Չեխիայում, մինչդեռ քաղաքացիական հասարակության ծնունդը այսքան տառապալից է Հայաստանում, Վրաստանում և հետխորհրդային մի շարք այլ հանրապետություններում [5, 145]:

«Ֆեոդալական կապիտալիզմի» արժեքների մեխանիկական փոխառնում՝ տնտեսական և սոցիալական անկման պատճառների համարժեք իմաստավորման բացակայության պայմաններում. ահա թե ինչի հետ գործ ունենք վերջին երկրներում:

Այսպիսով, սոցիալական ռիսկը անցումային հասարակություններում շոշափում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Եվ հետևաբար, նոր սոցիալ-քաղաքական իրողություններին ադապտացվելու անցումային հասարակության գերինդիքը հանգում է բարոյապես արդարացված նոր այնպիսի սոցիոմշակույթային միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի ոչ միայն սոցիալ-ինստիտուցիոնալ, այլև էթնոկեցության օպտիմալ գործառնությանն ու ինքնազարգացմանը՝ որակապես նոր համահասարակական փոխազդեցությունների, զարգացող ազատությունների և այս իրողություններով պայմանավորված ամենօրյա ընտրությունների և ռիսկերի անխուսափելիության համատեքստում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ибрагимова В. С. Социально-философский анализ риска в управленческой деятельности. Саратов, 1998.
2. Смакотина Н. Л. Основы социологии нестабильности и риска, М., 1999.
3. Гефтер М., Альтернативы общественного развития, М., 2003.
4. Ашин Г., Лозанский Э., Социология политики, М., 2001.
5. Ֆուկույամա Ֆր., Մշակույթի առաջնայնությունը, Դրոշակ, թիվ 3, 2002թ.:

Проблема социального риска в переходных обществах

Григорян Анна

Резюме

Ключевые слова: *социальный риск, общество риска, выбор варианта, социальная функция, социальное решение, ситуация риска, степень риска*

Анализ познания и содержания социального риска и его роль в общественной жизни предполагает выяснение специфики деятельности субъекта в ситуации риска. В данном контексте субъект предстает как носитель предметно-практической деятельности и познания, источник активности, направленной на объект.

Говоря о субъекте риска, как правило, подразумевают всех участников – индивидов, большие и малые группы, а также все общество в целом. Риска без его субъекта не существует. В одной и той же ситуации разные субъекты, вследствие своих особенностей, могут поступать по-разному. Фактором, способствующим проявлению риска, является объективно существующая неопределенность, которая обусловлена неоднозначностью социальной жизни, ограниченностью в принятии решений и ресурсов реализации, недостаточным познанием окружающей действительности.

Абсолютная неопределенность ситуации субъективно означает абсолютный риск, где все возлагается на случайность. Степень риска возрастает по мере снижения шансов для достижения цели и повышения затрат, возникших в результате ошибок. Исследование специфики деятельности субъекта в ситуации риска имеет не только теоретическое и методологическое, но и практическое значение. Деятельность, связанная с признанием рисков, создает реальные условия, способствует развитию научных возможностей личности.

Social Risk Problem in Societies in Transition

Grigoryan Anna

Summary

Key words: *social risk, risk society, variant choice, social factor, society in reconstruction, social decision, risk situation, degree of risk*

The analysis of the social risk cognition and substance, as well as its role in social life supposes the subject activities peculiarity interpretation in risk situation. In a specific context the subject presents himself as a bearer of concrete activities and cognition and a source of active participation in life. It is also directed to the object.

Any of society transformation, any social decision always supposes some risk portion. In this respect risk is also typical of transition society. Moreover, we mean not only the systematic qualitative re-establishment of society, but also real people.

The risk society is such a system, in which as a rule, the political form of governing and moral-psychological values have no sustainable operational conditions. Moreover, one may assert that the social risk is derived from the social transformation procedures and is considered to be the necessary component of those transformations, as far as at the present stage of civilization the humanity is in such a world, where all political, socio-economic, moral-psychological, ethic and other changes make us revise all our traditional ideas of society and observe global problems as a specific form of the society organism existence and operation.